

Չեկույց¹

«Արդարադատության իրականացումը և ազգային բարեփոխումների մարտահրավերները»

Հարգարժան տիկին Սուեր Բելասեն, պարոն Յանեշ Լենարչիչ, հարգարժան հյուրեր, տիկնայք և պարոնայք,

Ես ևս ողջունում եմ արդարադատության արդի մարտահրավերների առնչությամբ համաժողով անցկացնելու Ձեր նախաձեռնությունը, համոզված լինելով, որ արդիական այդ հարցադրումներին նմանաբնույթ ընդգծված անդրադարձը էապես կնպաստի դրանց լուծման այնպիսի լծակների բացահայտմանն ու կիրառմանը, որոնք առավել համահունչ կլինեն ժողովրդավարության և քաղաքակրթության ներկա պահանջներին:

Կարծում եմ, այս համաժողովը ինչպես հասարակական-քաղաքական ուժերի, այնպես էլ պրակտիկ իրավաբանների համար կդառնա համագործակցության, հանրության առջև ծառայած մարտահրավերներին համատեղ ուժերով դիմակայելու և ոչ թե դրանք քաղաքական սոսկ թուլեական խնդիրներին ծառայեցնելու լավագույն ուղեցույց և օրինակ, ինչի անհրաժեշտությունը, ցավոք, խիստ նկատելի է մեր օրերում:

Շուտով լրանալու է մարդու իրավունքների պաշտպանության և արդարադատության իրականացման այսօրվա թեմայի հետ անմիջականորեն առնչվող մարդկության դեմ ուղղված զարհուրելի հանցագործության՝ Հայոց Ցեղասպանության 95-րդ տարեիցը: Ոճրագործություն, որի հեղիակը, ցավոք, բանական մարդն է, ոճրագործություն, որն ընդունելու և քաղաքակրթությանը վայել կեցվածքով դատապարտելու պատրաստակամություն, ցավոք, դեռևս ոչ բոլորի մոտ է նկատվում: Այսօր անգամ հարկադրված ենք, որպես ելակետ ընդունելու այն իրողությունը, որ իրերն իրենց անուններով կոչելու և ազնվորեն սերունդների աչքերին նայելու փոխարեն, ոմանց և, հատկապես մեր հարևան թուրք ժողովրդի պատասխանատու պաշտոնյաների կողմից առաջադրվում են տարաբնույթ հնարքներ՝ սկսած ակնհայտ ու միանշանակ երևույթը պատմական հանձնաժողովներում քննարկման առարկա դարձնելու եղանակով այն քննեցնելու, մինչև՝ այն երկու պետությունների բնականոն դիվանագիտական փոխհարաբերությունների ձևավորման նախապայման հռչակելու նկրտումները:

Սա չափազանց կարևոր և ուսանելի ահագանգ է, ավելին սա կրկին ու կրկին անգամ մեզ հուշում է, որ մարդկության դեմ կատարված ոճրագործությունները անգամ ընդունելը, դեռ չենք խոսում դատապարտելու ու դրանք կանխարգելելու մասին, հաճախ կարող են ուղեկցվել տասնամյակներ, և չտա աստված, հարյուրամյակներ տևող անպտուղ քննարկումներով: Համոզվածք ենք, որքան ժամանակին ու անաչառ լինի այդ երևույթների նկատմամբ միջազգային վերաբերմունքը, այնքան մեծ կլինի դրա չկրկնվելու հավանականությունը:

¹ Չեկույցը ներկայացվել է 2010թ. մարտի 6-8-ը Երևանում կայացած Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) կողմից կազմակերպված «Արդարադատություն. Անկախ դատարանի առջև արդյունավետ պաշտպանության իրավունք. Նոր մարտահրավերներ» համաժողովին:

Այլևս սպասելի և իրավաչափ է ընկալվում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության հիմնախնդիրների քննարկման կիզակետում գլխավորապես արդարադատության մարտահրավերներն առանցքային հարցադրում դիտարկելը: Կարծում եմ, սա ևս օրինաչափ է, քանզի արդարադատության համակարգը այս տեսանկյունից երկակի նշանակություն ունի՝ այն հանդիսանում է մարդու իրավունքների պաշտպանության գլխավոր ինստիտուցիոնալ երաշխիք, մյուս կողմից՝ հենց արդար դատաքննության սկզբունքի ցանկացած խախտում, անգամ՝ թերություն, անհամեմատ մեծ բացասական հետևանքներ ու արձագանք է ունենում ողջ պետական համակարգում:

Ընդ որում, խոսքը իրավունքների խախտման արդյունքում հասարակության մեջ անհարկի բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորման երևույթի մասին է, իսկ անհրաժեշտ վստահության և հանդուրժողականության բացակայության պարագայում չափազանց բարդանում է բարեփոխումների բնականոն ընթացքը: Ցավալի է, որ քաղաքական բանավեճերին բնորոշ դարձած անհանդուրժողականությունը ձեռք է բերում որոշ դրսևորումներ՝ նաև իրավական բարդ հարցերի քննարկման փուլում:

Բնավ հակված չեմ պնդելու, թե մեր երկրում մենք չունենք արդարադատության ոլորտին առնչվող լուրջ հիմնախնդիրներ, հանրությանը հիրավի անհանգստացնող արատներ, միջազգային իրավական չափանիշներից տարբերվող օրենսդրական նորմեր ու գործեալոճ: Միաժամանակ, գերխնդիրը, կարծում եմ, պետք է լինի ոչ թե դրանց անհիմն ուռճացումն ու խեղաթյուրումը, անհարկի խոչընդոտներ ստեղծելը, այլ իրավիճակի հիրավի համարժեք վերլուծությունն ու սերտ համագործակցության արդյունքում դրանց դիմակայելը:

Ցավոք անկախ դատական համակարգի, դատավորների անկախությանն ու արդար դատաքննության սկզբունքի երաշխավորվածությանն ուղղված քայլերը և սոցիալ-քաղաքական նախադրյալները մեր երկրում ոչ միշտ են եղել համարժեք, ավելին՝ ակնհայտ բավարար չեն եղել սահմանադրական և օրենսդրական հիմքերը: Դեռևս 1995թ. ընդունված Սահմանադրությամբ ամրագրվեց դատական համակարգի մի այնպիսի աղճատված տարբերակ, որով դատավորների նշանակումն ու կարգապահական պատասխանատվությունը մեծամասամբ գործադիր իշխանության, մասնավորապես արդարադատության նախարարի տիրույթում պահելը դիտվեց իրավաչափ և անգամ միջազգային չափանիշներին համահունչ իրավական դիրքորոշում: Խնդիրն էապես վերանայվեց 2005թ. հանրաքվեի միջոցով կատարված փոփոխությունների արդյունքում, սակայն օրենսդրական կտրվածքով այն ամրագրվեց էլ ավելի ուշ՝ ընդամենը 3 տարի առաջ:

Բնականաբար, որպես դատաիրավական բարեփոխումների համար պատասխանատու պաշտոնատար անձ, առանցքային նշանակություն են տալիս նաև հասարակության մեջ ձևավորված իրավագիտակցությանը, առավել սուր քննադատության թիրախ դարձած իրավական երևույթներին: Այս ասպեկտով ցանկանում եմ ընդգծել, որ համեմատական վերլուծությունը միանշանակ հանգեցնում է այն եզրահանգման, որ, թեպետ

քննադատության ուժգնության աճին, տեղի են ունեցել ակնհայտ բովանդակային էական վերանայումներ. այսօր այլևս դադարել են անգամ քննարկման նյութ լինելու այնպիսի երևույթներ, որոնք տարածված էին դեռ 10-15 տարի առաջ: Մեզ հաջողվել է կարճ ժամկետում բացառել այդ երևույթները, սակայն հնարավոր է, արդյոք ամբողջությամբ բացառել նաև դրանց հետևանքները:

Արդարադատության ոլորտում հիրավի արժեքավոր բարեփոխումների երաշխավորվածության գրավական կարող է լինել, հատկապես փաստերի ճշգրիտ արտացոլման մշակույթը, ինչը ևս չի կարող գոհացուցիչ լինել: Ինքս հարկադրված եղա, դեռ օրեր առաջ մամուլի ուշադրությունը բևեռել ԵԱՀԿ-ի ԺՀՄԻԳ-ի «Դատավարությունների դիտարկում» զեկույցի առնչությամբ իմ կողմից հրապարակված հաղորդումը հնարավորինս անաչառ ներկայացնելու անհրաժեշտության վրա, քանզի այն լուսաբանվում էր բացառապես մի տեսանկյունից: Մինչդեռ, հետևողականորեն ոչինչ չէր ասվում այն մասին, որ, միանգամայն հիմնավորված համարելով դատաիրավական բարեփոխումներն օրենսդրական և գործնական հարթությամբ լուծելուն միտված զեկույցում արտացոլված առաջարկությունները, խնդիր էր դրվել սեղմ ժամկետում դրանք դարձնել համակողմանի քննարկման առարկա՝ սահմանելով զեկույցին համահունչ քայլեր ձեռնարկելու հստակ ժամանակացույց: Նկատեմ, որ իշխանությունների կողմից արդեն իսկ այդ հաղորդումն ստացել է համարժեք արձագանք, իսկ դրան համահունչ վերջնական արդյունքները տեսանելի կլինեն առավելագույնը՝ այս տարվա վերջում: Ընդ որում, որոշ առաջարկություններ արդեն կյանքի են կոչվել հենց այս հանրաժողովի անցկացման պահին:

Եթե փորձելու լինենք համակարգված տեսքով ներկայացնելու մեր երկրում արդարադատության արդի մարտահրավերները, ապա պարզ կդառնա, որ դրանք խիստ չեն տարբերվում այլ երկրներում առկա իրավիճակից: Բացի այն, որ դրանց մի մասն ամրագրված է ԵԱՀԿ-ի ԺՀՄԻԳ-ի վերոհիշյալ զեկույցում, ստորև կանդրադառնամ նաև մեզ մտահազող և մեր կողմից առաջադրված մարտահրավերների առավել կարևոր հատվածին՝

- դատավարության օրենսդրության արմատական վերանայման արդյունքում այնպիսի հիմնադրույթների ամրագրում, որոնք միտված կլինեն իրավունքի գերակայության ամրապնդմանը, մասնավորապես՝ դատաքննություններին կողմերի լիարժեք հավասարության ապահովմանը, տուժողների և վկաների անվտանգության երաշխավորվածության բարձրացմանը, պաշտպանների կարգավիճակի նկատելի բարելավմանը, խափանման միջոցների կիրառման առավել առաջադիմական ընթացակարգերի կիրառմանը, օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցները հիմք ընդունելու դեպքերի խստագույն բացառմանը, արագացված դատաքննության շրջանակների ընդլայնմանը և այլն,

- քրեական դատավարությունում մրցակցության սկզբունքի լիարժեք ապահովումը,

- մինչդատական վարույթ իրականացնող պաշտոնյաների, դատախազների և դատավորների մասնագիտական պատրաստվածության և էթիկական որակների արմատական բարելավումը,

- դատավորների կարգապահական պատասխանատվության ինստիտուտի բարելավումն այն կտրվածքով, որը միաժամանակ հնարավորություն կտա, չխաթարելով դատավորների անկախության սկզբունքը, գործուն դարձնել այդ համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարը,

- միջազգային իրավունքի սկզբունքներին համահունչ վարչարարության օրենսդրության և պրակտիկայի վերանայումը: Արդարադատության նախարարության նախաձեռնությամբ շատ շուտով կիրառման մեջ կդրվեն վարչարարության կանոններ, որոնք այլևս կբացառեն բյուրոկրատիային բնորոշ այնպիսի երևույթներ, ինչպիսիք են պետական մարմիններին՝ այլ պետական մարմիններից տրվող տարաբնույթ փաստաթղթեր ձեռք բերելու և ներկայացնելու պրակտիկան, պաշտոնյաների հետ անհարկի շփումները, գերատեսչություններին անկանխատեսելի հայեցողական լիազորություններով օժտելը և այլն:

Այս հարցադրումներից յուրաքանչյուրը ներկայումս լայն քննարկման առարկա է և առնչվում է բազմաբնույթ այլ խնդիրների հետ: Այսպես, խափանման միջոցի ինստիտուտի առնչությամբ ներկայումս շրջանառության մեջ է դրված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը, որով առաջարկվում են կալանքը, որպես խափանման միջոց ընտրելու արմատապես նոր հիմքեր և ընթացակարգեր: Յուրաքանչյուր դեպքում հարկ կլինի դատարանին ներկայացնել բավարար փաստարկներ, որոնք հիմք կտան վերջինիս պարզելու, թե արդյո՞ք առկա են բավարար հիմքեր՝ տվյալ անձի կողմից իրեն մեղսագրվող արարքը կատարելու մասին հիմնավոր կասկած ունենալու մասին (գործող օրենսդրությունը դա բացառում է): Այնուհետև՝ կալանքի միջնորդությամբ հարկ է լինելու կոնկրետ փաստերով հիմնավորել, որ անձը թույլ է տվել կամ կարող է թույլ տալ այնպիսի վարքագիծ, որը միանշանակ հիմք է խափանման այդ տեսակի միջոցը կիրառելու համար: Վերանայվելու է այն մոտեցումը, երբ խափանման միջոցի ընտրության հիմքում ինքնին դրվում է հանցագործության ծանրությունը: Իրազեկեմ, որ առայսօր այս մոտեցումը ներառված է հայրենական օրենսդրությունում:

Պատահական չէ, որ այս հարցադրումները խիստ արդիական համարվեցին նաև Ժողովրդավարության հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի վերոհիշյալ զեկույցում: Պատահական չէ նաև, որ դրանց շուտափույթ վերանայման անհրաժեշտությունն ընդգծվել է նաև մեր երկրի Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներում:

Կարծում եմ, հիշյալ մարտահրավերներին պատշաճ լուծում տալու քայլերին էապես կնպաստի նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից նախաձեռնած հենց այդ միջազգային դատական ատյանի բարեփոխումների գործընթացը: Այս տարվա փետրվար

ամսին Ինտերլակենում տեղի ունեցած գիտաժողովում բարձրացված սուր հարցադրումների քննարկումը հույս է ներշնչում, որ մենք միացյալ ուժերով կկարողանանք բարելավել նաև նշված դատարանի կողմից կայացված դատական ակտերի կատարման որակը, նպաստել արդեն ներկայումս շուրջ 110 հազարը գերազանցող զանգատների քննարկման ժամկետների և ընթացակարգերի բարելավմանը և լուծելու ներկայումս խիստ արդիական մանաբնույթ այլ հիմնախնդիրներ:

Բոլոր դեպքերում, այս հարցում առանցքային դերակատարում պետք է ունենան ազգային ընդհանուր իրավասության դատարանները, քանզի վերջիններս կոչված լինելով դեկավարվելու Կոնվենցիայով, իրենք են իրավասու դատաքննությամբ պարզել, թե որքանով են իշխանության մյուս մարմինների իրավական ակտերն ու գործողությունները համապատասխանում Կոնվենցիային: Այս առումով դժվար է չհամաձայնվել ազգային դատարանների դերակատարման վերաբերյալ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դատավոր տիկին Ֆրանսուազ Տյուլկենսի տեսակետների հետ:

Անհրաժեշտ է նկատել, որ վերը նշված բարեփոխումների համար հաճախ ուղեցույց են հանդիսանում մեր երկրի Սահմանադրական դատարանի որոշումները, որոնցում հատկապես վերջին շրջանում էական տեղ է հատկացվում դատավարական, իսկ առանձին դեպքերում՝ նաև նյութական իրավունքի օրենսդրական խախտման փաստերին: Բնորոշ է, հատկապես այն, որ այդ որոշումների արդյունքում հարկ եղավ անգամ կատարելու ինստիտուցիոնալ բարեփոխումներ՝ երկրի դատական ատյանների կառուցվածքում:

Կարծում եմ, որ իրավիճակի բարելավման գործում էական դերակատարում ունի նաև Հայաստանի Մարդու Իրավունքների պաշտպանը, որը ոչ միայն իրեն բնորոշ լիազորությունների շրջանակներում բեռնում է իրավասու մարմինների ուշադրությունը առկա հիմնախնդիրների վրա, այլև՝ չի խորշում հաճախ օրինագծեր մշակելու և շրջանառության մեջ դնելու դրական գործելաոճից: Բնորոշ է այն, որ դրանք հիմնականում վերաբերում են առանցքային հարցադրումների:

Ի դեպ, Հանրապետության Նախագահի համապատասխան հրամանագրի համաձայն՝ մարդու իրավունքներին առնչվող յուրաքանչյուր օրինագիծ պարտադիր կարգով ներկայացվում է նաև Մարդու իրավունքների պաշտպանի քննարկմանը:

Հայաստանի Հանրապետության իշխանությունները, ի դեմս արդարադատության նախարարության, 2004 թվականին ձեռնամուխ եղան «Փաստաբանության մասին» նոր օրենքի մշակման և ընդունման աշխատանքներին, որն իր հերթին խթան հանդիսացավ վերը նշված առաջընթացի համար և ապահովեց պատշաճ նորմատիվ հենք: Սակայն օրենքի հետագա գործնական կիրառումը երևան հանեց մի շարք խնդիրներ, որոնք առաջ բերեցին օրենքը բարեփոխելու անհրաժեշտությունը: Արդարադատության նախարարությունը, փաստաբանների պալատի, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, Ամերիկյան իրավաբանների ընկերակցության օժանդակությամբ ձեռնարկեց «Փաստաբանության մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքում լայնածավալ փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքի նախագծի պատրաստման աշխատանքները:

Նոր նախագծով, ըստ էության, հստակեցվում է փաստաբանական գործունեության հասկացությունը, մասնավորապես սահմանվում են այն գործառույթները, որոնք կարող են համարվել փաստաբանական գործունեություն, առավել կատարելագործվել է փաստաբանների պալատի կարգավիճակը, որը սահմանվել է որպես բոլոր փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն, հստակ սահմանվում են պալատի խնդիրները և այլն:

Տեղին է ընդգծել անվճար իրավաբանական օգնության տրամադրման սահմանների ընդլայնումը: Ներկայումս անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում է միայն քրեական գործերով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում, ինչպես նաև խիստ սահմանափակ քաղաքացիական գործերով (ալիմենտի բռնագանձում, կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերով և այլն): Նոր նախագծով նախատեսվել են մի շարք դեպքեր, երբ անձին անվճար իրավաբանական օգնություն կարող է տրամադրվել նաև այլ գործերով, ընդ որում, որպես չափանիշ ընդունվել է ոչ թե *պահանջի բնույթը կամ տեսակը, այլ իրավաբանական օգնության կարիք ունեցողի նյութական կամ սոցիալական դրությունը* (գործագուրկ, անգործունակ հաշմանդամ, զոհված զինծառայողի ընտանիքի անդամ և այլն): Այս բարեփոխումը անկասկած կարևոր քայլ է դատական պաշտպանության հավասար իրավունքի, մրցակցության և իրավահավասարության սկզբունքների արդյունավետ իրականացման համար:

Մեծարգո հյուրեր, ավարտելով ելույթս, մեկ անգամ ևս հարկ եմ համարում ընդգծել, որ մեր երկրում այս՝ հիրավի հանրաճանաչ միջազգային կազմակերպության կողմից նախաձեռնած համաժողովը կունենա բարերար ազդեցություն նաև տարածաշրջանում առկա միջպետական տարածայնությունները բացառապես խաղաղ միջոցներով լուծելու և ռազմաշունչ, մարդկության դեմ ուղղված հերթական ռազմական գործողություններից ձեռնպահ մնալու մթնոլորտի ձևավորմանը: Ոչ մի քաղաքական դրդապատճառ չի կարող արդարացնել խաղաղ բնակչության դեմ ռազմական գործողությունների սանձազերծումը, իսկ ռազմատենչ հայտարարություններն ինքնին միջազգային իրավունքի սկզբունքների խախտումներ են:

***Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար,
իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Դանիելյան***